Թ.00.01 - «ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ»

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Ընդհանուր մասնագիտական կրթամաս (75 հարց)

1. Փիլիսոփայության պատմության և պատմության փիլիսոփայության առանձնահատկությունները:
2. Հումանիտար և բնագիտական մշակույթների փոխհարաբերության մետաֆիզիկական (տրանսցենդենտալիստական) հայեցակարգը:
3. Հումանիտար և բնագիտական մշակույթների փոխհարաբերության պոզիտիվիստական հայեցակարգը:
4. Հումանիտար և բնագիտական փոխհարաբերության դուալիստական (հակաինտերակցիոնալիստական) հայեցակարգը (Դիլթայ, Վինդելբանդ, Ռիկկերտ):
5. Հումանիտար և բնագիտական մշակույթների փոխհարաբերության դիալեկտիկական (փոխլրացման) հայեցակարգը:
6. Աշխարհի փիլիսոփայական իմաստավորման առաջին փորձերը:
7. Հին հունական փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը: Կեցության իդեալիստական և մատերիալիստական ըմբռնումները:
8. Միջնադարյան մշակույթի և փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը: Հոգու և մարմնի, բանականության և հավատի, էության և գոյության հիմնախնդիրները:
9. Միջնադարյան հայ փիլիսոփայության բնորոշ գծերը:
10. Փիլիսոփայության անհաղթության ըմբռնումը:
11. Վերածննդի մշակույթի և փիլիսոփայության մարդակենտրոն բնույթը: Հումանիզմ:
12. Բնափիլիսոփայությունը՝ որպես Վերածննդի յուրահատուկ փիլիսոփայություն:
13. Վերածննդի հարցը հայ պատմափիլիսոփայության մեջ:
14. Նոր ժամանակների մշակույթի և փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը:
15. Գիտական ճանաչողության մեթոդի հիմնախնդիրը Նոր Ժամանակի փիլիսոփայության մեջ: Էմպիրիզմ և ռացիոնալիզմ:
16. Լուսավորականության սոցիալ-պատմական նախադրյալները: 18-րդ դարի հայ լուսավորական փիլիսոփայության առանձնահատկությունները:
17. Պատմության փիլիսոփայության հիմնահարցերը գերմանական դասական փիլիսոփայության մեջ:
18. Կոնտը որպես գիտության փիլիսոփայության պոզիտիվիստական ավանդույթի հիմնադիր:
19. Դասական պոզիտիվիզմի ճգնաժամը: Էմպիրիոկրիտիցիզմ:
20. Ռասելի «տրամաբանական ատոմիզմը» և նեոպոզիտիվիզմի ծրագիրը:
21. Գիտական գիտելիքի ճշմարտության հետպոզիտիվիստական ըմբռնումը: Պոպեր:
22. Հերմենևտիկան որպես սոցիալական գիտելիքի մեկնաբանման արվեստ:
23. Մարդու օտարման հիմնահարցը էկզիստենցիալիզմի փիլիսոփայության մեջ:
24. Պատմության փիլիսոփայություն: Պատմության իմաստն ու նշանակությունը:
25. Ճշմարտության հարցը պրագմատիզմի փիլիսոփայության մեջ:
26. Աշխարհի պատկերի փիլիսոփայական ըմբռնումը, նրա կառուցվածքն ու գործառույթները:
27. Աշխարհի դիցաբանական պատկերը և նախագիտության ձևավորման սոցիոմշակութային նախադրյալները:

28. Աշխարհի կրոնական պատկերը:
29. Աշխարհի դասական (մեխանիկական) պատկերը
30. Աշխարհի հետդասական (քվանտառելյատիվիստական և էվոլյուցիոն պատկերը:
31. Աշխարհի էվոլյուցիոնիստական պատկերը:
32. Իմացության պրոցեսի էությունն ու կառուցվածքը: Զգայական և ռացիոնալ ճանաչողություն:
33. Մտածողություն և լեզու: Բնական և արհեստական լեզուներ: Մտածողության մոդելավորման և արհեստական ինտելեկտի հիմնահարցերը:
34. Գեղեցկության սկզբունքը տեսության մեթոդաբանական կարգավորիչների համատեքստում:
35. Փաստարկումը որպես տեսական գիտելիքների հիմնավորման եղանակ: Համատեքստային (կոնտեքստուալ) փաստարկման եղանակները:
36. Ճշմարտությունը որպես տեսական գիտելիքի օբյեկտիվության մեթոդաբանական կարգավորիչ:
37. Գիտական գիտելիքների ճշմարտության նորպոզիտիվիստական ըմբռնումը: Վերիֆիկացման սկզբունքը:
38. Գիտական գիտելիքի ճշմարտության հետնեոպոզիտիվիստական ըմբռնումը: Ֆալսիֆիկացման սկզբունքը:
39. Գիտական գիտելիքի էմպիրիկ մակարդակն ու նրա կառուցվածքը:
40. Գիտական գիտելիքի մետատեսական մակարդակը և նրա կառուցվածքը:
41. Գիտական հետազոտության մեթոդաբանությունը. մեթոդ և մեթոդաբանություն:
42. Էմպիրիկ հետազոտության համագիտական մեթոդները:
43. Տեսական ճանաչողության համագիտական մեթոդները:
44. Էմպիրիկ հետազոտության և տեսական ճանաչողության համատրամաբանական մեթոդները:
45. Օրենքը, վարկածը և տեսությունը որպես գիտական գիտելիքի ձևեր: Գիտական տեսությունը որպես հավաստի գիտելիքի ձև:
46. Գիտության զարգացման Թ.Կունի մոդելը: Գիտական հարացույց և գիտական հեղափոխություն:
47. Գիտական հայտնագործության տրամաբանությունը ըստ Իմրե Լակատոսի: Հետազոտական ծրագրերի մրցակցության սկզբունքը:
48. Գիտության փիլիսոփայության հետմոդեռնիստական վարկածը ըստ Պոլ Ֆոյերաբենդի: Մեթոդական անարխիզմի սկզբունքը:
49. Արդի գիտատեխնիկական ճգնաժամի առանձնահատկությունները:
50. Գիտության զարգացման ինտերնալիստական /ներքին/ և էքստերնալիստական /արտաքին/ մոդելները:
51. Կյանքի ծագման բնագիտական և փիլիսոփայական վարկածները: Կյանքի փիլիսոփայական ըմբռնումը:
52. Մարդու ծագման բնագիտական և փիլիսոփայական վարկածները: Մարդու էությունը:
53. Մշակույթի ծագման բնագիտական և փիլիսոփայական վարկածները: Մշակույթի էությունը:
54. Քաղաքակրթության ծագման վարկածները: Կոլեկտիվապաշտական և անհատապաշտական քաղաքակրթություններ:
55. Պետության ծագման փիլիսոփայական վարկածները. պետությունն իբրև սոցիալականության կազմակերպման եղանակ:
56. Սոցիալականությունը որպես հասարակության հիմնարար հատկություն. սոցիալական կեցության դրսևորմա ձևերը:
57. Հասարակությունն իբրև ինքնազարգացող և ինքնակարգավորվող համակարգ:

58. Սոցիալական առաջադիմության էությունը, դրևորման ձևերն ու չափորոշիչները:
59. Սոցիալական կեցության հետազոտման մեթոդները (նոմոթետիկ և իդեոգրաֆիկ) և դրանց դրսևորման ձևերը:
60. Բնությունը որպես փիլիսոփայական իմաստավորման օբյեկտ: էկոլոգիական փիլիսոփայություն:
61. Պատմության զարգացման փուլային մոդելը:
62. Պատմության զարգացման գծային մոդելը:
63. Պատմության զարգացման ուտոպիստական մոդելը:
64. Պատմության զարգացման մարքսիստական և մոդեռնիստական մոդելները:
65. Պատմության զարգացման սիներգետիկական և հետմոդեռնիսատական մոդելը:
66. Հասարակական կյանքի տնտեսական ոլորտը: Բաշխման, փոխանակման և սպառման հարաբերությունների փիլիսոփայական ըմբռնումները:
67. Հասարակական կյանքի սոցիալական ոլորտը: Հասարակության սոցիալական կառուցվածքը և նրա պատմական էվոլյուցիան:
68. Հասարակական կյանքի քաղաքական ոլորտը: Քաղաքական կեցության առանձնահատկությունները:
69. Քաղաքացիական հասարակության ընդհանուր բնութագիրը: Ազատություն և պատասխանատվություն:
70. Հասարակական գիտակցության կառուցվածքը, մակարդակները և ձևերը:
71. Ազգային հոգեբանություն և ազգային կենսափիլիսոփայություն:
72. Մշակույթ և քաղաքակրթություն: Մշակույթների երկխոսություն և մշակութային ագրեսիա:
73. Ազգ, ազգային պետություն,ազգային մշակույթ:
74. Կյանքի իմաստը: Կյանքի և մահվան հիմնահարցը մարդու հոգևոր փորձում:
75. Արդի մարդաբանական ճգնաժամի առանձնահատկությունները. ամբոխ և ամբոխային վարք:

Լրացուցիչ մասնագիտական կրթամաս (25 հարց)

1. Սիրո ըմբռնման մոլորությունները:
2. Բռնություն և հանդուրժողականություն: Կոնֆլիկտը որպես այլակերպության մերժում:
3. Ես-ի և Ուրիշ-ի ազատությունը համակեցության պայմաններում:
4. Ինքնության հիմնահարցը ցանցային հասարակության համատեքստում:
5. Սոցիալական կապիտալի առանձնահատկությունները ցանցային հասարակությոընում :
6. Իրավունքներն (rights) ու իրավազորությունները (entitlements). արդարության Ռ. Նոզիքի սկզբունքները:
7. Հասկացման հիմնախնդիրը միջմշակութային հաղորդակցությունում:
8. Օտար մշակույթի յուրացման առանձնահատկությունները:
9. Պատերազմի էթիկա:
10. Զանգվածային մշակույթը որպես սպառողական գաղափարախոսություն: Սպառողական հասարակության ձևավորման քաղաքակրթական և մարդաբանական նախադրյալները:
11. Զանգվածային մշակույթ և զանգվածի մարդ:
12. Բարոյական պարադոքսների սոցիոմշակութային առանձնահատկությունները:
13. Պատմական ռեկոնստրուկցիայի հիմնախնդիրը փիլիսոփայական հետազոտություններում:

14. Հերմենևտիկական շրջանի գաղափարը և փիլիսոփայության պատմությունը:
15. Ավտորիտար և հումանիստական խիղճ:
16. Խղճի էվոլյուցիոնիստական և ինտուիտիվիստական ըմբռնումները:
17. Բարոյական նիհիլիզմը և աշխարհականացման գործընթացները:
18. Բարոյագիտության դեոնտոլոգիական տեսություններ:
19. Հետևանքների վրա հիմնվող բարոյագիտական տեսություններ:
20. Առաքինությունների բարոյագիտություն:
21. Գիտելիքի և հավատի փոխհարաբերության հարցը միջնադարյան փիլիսոփայական ուսմունքներում:
22. Գիտելիքի հնարավորության և հավատի հիմքերի հիմնահարցերը:
23. Բանականության և հավատի իմաստավորումը Ի. Կանտի փիլիսոփայության համակարգում:
24. Հայոց ինքնության հարացույցները /հեթանոսական, քրիստոնեական, լուսավորական/:
25. Հայոց ինքնության դրսևորումները հայկական էպոսում: